

ԵՐԿԱԿԻ ԱՐՁԱՆԱԳՐՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ՆԿԱՐԱԳԻՐ



Վերանայվել է 10-26-22

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ 001 – ՆԵՐԱԾԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

Սա ներածական դասընթաց է, որը ներառում է արդարադատության կառավարման հիմունքները, Եվրոպայում և Միացյալ Նահանգներում արդարադատության իրականացման պատմությունն ու փիլիսոփայությունը: Այն ներառում է տարբեր ենթահամակարգերի ճանաչումը: Ներառում է նաև, հանցագործության, պատժի, վերականգնման, էթիկայի, կրթության և արդարադատության մասնագետների վերապատրաստման տեսությունները:

Դասախոսություն. 3 ժամ

նախապայման. Չկա

Հաստատված է “g” UC/CSU համալսարանների համար

Խորհուրդ է տրվում ԲԴՄՇ-ի հետևյալ աշակերտներին. ԲԴՄՇ-ի բոլոր աշակերտների համար

ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ 101 - ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ I ՄԿՄՆԱԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Հայոց լեզու 101 դասընթացը սովորեցնում է հայկական այբուբենը, տառերն ու հնչյունները, ինչպես նաև հայոց լեզվի քերականության հիմնական դրույթները: Աշակերտները կսովորեն ճիշտ արտասանել, ձևափոխել բառապաշար և հասկանալ, կարդալ, գրել ու խոսել պարզ հայերենով: Ներկայացնում ենք նաև հայկական մշակույթի հիմնական գիտելիքները:

Դասախոսություն. 5 ժամ

նախապայման. Չկա

Հաստատված է “e” UC/CSU համալսարանների համար

Խորհուրդ է տրվում ԲԴՄՇ-ի հետևյալ աշակերտներին. ԲԴՄՇ-ի բոլոր աշակերտների համար

ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ 102 – ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ II ՄԿՄՆԱԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Հայոց լեզու 102 դասընթացը շարունակում է զարգացնել լեզվի հիմնական դրույթները, ներառելով ըմբռնումը, ընթերցանությունը, լսելը և գրավոր աշխատանքի ավելի բարդ հմտություններ: Աշակերտը շարունակում է ձևափոխել խոսակցական բառապաշար: Աշակերտները կարող են պոեզիայի և արձակվի պարզ տեքստեր, որոնք մշակութային նշանակություն ունեն:

Դասախոսություն. 5 ժամ

նախապայման. Հայոց լեզու 101

Հաստատված է “e” UC/CSU համալսարանների համար

Խորհուրդ է տրվում ԲԴՄՇ-ի հետևյալ աշակերտներին. ԲԴՄՇ-ի բոլոր աշակերտների համար

ԱՐՎԵՍՏ 201 – ՆԿԱՐՉՈՒԹՅՈՒՆ 1

Արվեստ 201-ը հիմնական դասընթաց է, որը կենտրոնանում է նկարչության վրա, որպես տեսողական լեզվի համակարգ: Կուսումնասիրվի կտավի հարթությունը, լույսի տրամաբանությունը և հեռանկարը, երբ կհետազոտվեն տարբեր մեթոդներ և լրատվամիջոցներ:

Դասախոսություն. 2 ժամ, լաբարատոր աշխատանք. 2 ժամ

նախապայման. Չկա

Հաստատված է “F” UC/CSU համալսարանների համար

Խորհուրդ է տրվում ԲԴՄՇ-ի հետևյալ աշակերտներին. մուլտիպլիկացիա, թվային մեդիա արտադրություններ, լուսանկարչություն, բեմական արհեստագործական տեխնոլոգիա, թվային արտադրություն

ԵՐԿԱԿԻ ԱՐՁԱՆԱԳՐՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ՆԿԱՐԱԳԻՐ



ԵՐԵՄԱՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ 011 – ԵՐԵՄԱ, ԸՆՏԱՆԻՔ ՈՒ ՀԱՄԱՅՆՔ

Այս դասընթացն ուսումնասիրում է հիմնական կրթական խնդիրները, օրենսդրությունը և ընդհանուր ուղղությունները, որոնք ազդում են երեխաների, նրանց ընտանիքների և համայնքի վրա: Այն ուսումնասիրում է ընտանեկան առօրյա կյանքի վրա ազդող սոցիոլոգիական, մշակութային և տնտեսական ազդեցությունները: Այս դասընթացը կբացահայտի առողջության, կրթության և հանրային բարեկեցության համայնքային ռեսուրսները:

Դասախոսություն. 3 ժամ

նախապայման. Չկա

“a-g” հաստատված չէ (միայն CSU համալսարան տեղափոխվելու համար)

Խորհուրդ է տրվում ԲԴՄՇ-ի հետևյալ աշակերտներին. ԲԴՄՇ-ի բոլոր աշակերտների համար

ԿԻՆՈՄԱՏՈԳՐԱՖԻԱ 107 – ՀԱՄԿԱՆԱԼ ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԿԻՆՈՆԿԱՐՆԵՐԸ

Այս դասընթացն աշակերտներին է տրամադրում կինոնկարի վերլուծական քննադատական հետազոտություն՝ որպես արվեստի ձև, զբաղմունքի առարկա և հաղորդակցման միջոց՝ ցուցադրությունների, դասախոսությունների, «դասական» և ժամանակակից կինոնկարների, ամերիկյան և արտասահմանյան, թատերական և ոչ թատերական ընթերցումների միջոցով:

Դասախոսություն. 3 ժամ

նախապայման. Չկա

Հաստատված է “F” UC/CSU համալսարանների համար

Խորհուրդ է տրվում ԲԴՄՇ-ի հետևյալ աշակերտներին. ԲԴՄՇ-ի բոլոր աշակերտների համար

ՀԱՂՈՐԴԱԿՑՄԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ 101 – ՀԱՆՐԱՅԻՆ ԲԱՆԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

Սա ներածական դասընթաց է, որն ուշադրությունը դնում է արդյունավետ բանավոր հաղորդակցության անհրաժեշտության վրա: Դասընթացի կարևոր կետերն են. մարդկային հաղորդակցության սկզբունքները, խոսքի տարբեր տեսակների կառուցվածքը, տեղեկատվության հետազոտությունը, լսարանի վերլուծություն, հանրային դասախոսության քննադատական վերլուծություն, ելույթի ներկայացում և ինքնավստահություն հանրային բանախոսության իրավիճակներում:

Դասախոսություն. 3 ժամ

նախապայման. Չկա

Հաստատված է “g” UC/CSU համալսարանների համար

Խորհուրդ է տրվում ԲԴՄՇ-ի հետևյալ աշակերտներին. Բոլոր NAF ակադեմիաների և ԲԴՄՇ-ի բոլոր աշակերտների համար

ԵՐԿԱԿԻ ԱՐՁԱՆԱԳՐՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ՆԿԱՐԱԳԻՐ



ՀԱՂՈՐԴԱԿՑՄԱՆ ՌԻՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ 101 – ՀԱՆՐԱՅԻՆ ԲԱՆԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

Սա ներածական դասընթաց է, որն ուշադրությունը դնում է արդյունավետ բանավոր հաղորդակցության անհրաժեշտության վրա: Դասընթացի կարևոր կետերն են. մարդկային հաղորդակցության սկզբունքները, խոսքի տարբեր տեսակների կառուցվածքը, տեղեկատվության հետազոտությունը, լսարանի վերլուծություն, հանրային դասախոսության քննադատական վերլուծություն, ելույթի ներկայացում և ինքնավստահություն հանրային բանախոսության իրավիճակներում:

Դասախոսություն. 3 ժամ

նախապայման. Չկա

Հաստատված է “g” UC/CSU համալսարանների համար

Խորհուրդ է տրվում ԲԴՄՇ-ի հետևյալ աշակերտներին. Բոլոր NAF ակադեմիաների և ԲԴՄՇ-ի բոլոր աշակերտների համար

ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆ 020 – ՀԵՏՄԻՋՆԱԿԱՐԳ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ. ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ

Այս դասընթացը աշակերտներին է ներկայացնում բարձրագույն կրթության դերը հասարակությունում և նրանց դերը որպես ուսանող: Աշակերտները ուսումնասիրում են համալսարանի հաջողության համար անհրաժեշտ անհատական հատկանիշներ, քննադատական մտածողության և արդյունավետ ուսումնասիրությունների մեթոդներ, որոնք առնչվում են աշխարհի տարբեր մարդկանց հետ, մասնագիտության պլանավորում և որոշումների կայացման գործընթաց, ինչպես նաև տեղափոխում և կրթական պլանավորում: Այս դասընթացն աշակերտներին ծանոթացնում է նաև համալսարանի ռեսուրսների և կանոնների հետ:

Դասախոսություն. 3 ժամ

նախապայման. Չկա

Հաստատված է “g” UC/CSU համալսարանների համար.

Խորհուրդ է տրվում ԲԴՄՇ-ի հետևյալ աշակերտներին. Բոլոր NAF ակադեմիաների և ԲԴՄՇ-ի բոլոր աշակերտների համար

ՃԱՐՏԱՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ 101 – ԸՆԴՀԱՆՈՒՐ ՃԱՐՏԱՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ (ԻՆՇԻՆԵՐԱԿԱՆ ԱՐՎԵՍ)

Այս դասընթացն աշակերտներին է ներկայացնում ճարտարագիտության և տեխնիկայի ոլորտի մասնագիտություններում առաջարկվող բազմաթիվ աշխատանքներ և պարզներ՝ համապատասխան տեղեկատվության և գործնական խնդիրների ներկայացման միջոցով:

Դասախոսություն. 2 ժամ

նախապայման. Չկա

Հաստատված է “g” UC/CSU համալսարանների համար

Խորհուրդ է տրվում ԲԴՄՇ-ի հետևյալ աշակերտներին. Բոլոր NAF ակադեմիաների և ԲԴՄՇ-ի բոլոր աշակերտների համար

ԵՐԿԱԿԻ ԱՐՁԱՆԱԳՐՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ՆԿԱՐԱԳԻՐ

ՖԻՆԱՆՍԵՐ 008 – ԱՆՀԱՏԱԿԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐ ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐ

Սա ներածական դասընթաց է անձնական ռեսուրսների պատասխանատու բաշխման համար անհրաժեշտ հասկացությունների և գործիքների վերաբերյալ: Կարևորությունը տրվում է իրենց կյանքի ընթացքում յուրաքանչյուր ընտանիքի առջև ծառայած զգալի ֆինանսական որոշումների վրա, ներառյալ բյուջետավորումը, գրառումների պահպանումը, սպառողների կատարած գնումները, վարկը, տան սեփականությունը, ապահովագրությունը, ներդրումները, թոշակի անցնելը և սեփական գույքի պլանավորումը: Աշակերտները պետք է գտնվեն այնպիսի վիճակում, որ արդեն կարողանում են գումար վաստակել և ծախսելու փորձ ունենան: Այս դասընթացը է, բայց կտվորեցնի կյանքի չափազանց արժեքավոր հմտություններ:

Դասախոսություն. 3 ժամ

նախապայման. Չկա

Հաստատված է “g” UC/CSU համալսարանների համար

Խորհուրդ է տրվում ԲԴՄԾ-ի հետևյալ աշակերտներին. ԲԴՄԾ-ի բոլոր աշակերտների համար

ԱՌՈՂՋՈՒԹՅՈՒՆ 102 – ԱՌԱՋԻՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄՐՏԱՆՈԹԱՅԻՆ ՎԵՐԱԿԵՆԴԱՆԱՑՈՒՄ (CPR)

Առողջություն 102 դասընթացը ներառում է մեծահասակների, երեխաների և նորածինների համար հատկացված պատշաճ խնամք արտակարգ իրավիճակների դեպքում: Աշակերտները ձեռք են բերում գիտելիքներ և հմտություններ, որոնք անհրաժեշտ են արտակարգ իրավիճակներում օգնել փրկել մարդկանց կյանքը և նվազագույնի հասցնել վնասվածքների կամ հանկարծակի հիվանդությունների հետևանքները մինչև շտապ օգնության ժամանումը: Դասընթացը ներառում է առաջին օգնություն, սրթանոթային վերակենդանացում (CPR), սրտի ռիթմի ինքնաբերաբար վերականգնում (AED), վնասվածքների վերահսկում և հիվանդությունների փոխանցման կանխարգելում: Այս դասընթացը համապատասխանում է Ամերիկյան Կարմի Խաչի ընկերության պահանջներին, որոնք անհրաժեշտ են դպրոցում և համայնքում առաջին օգնության/CPR/AED հավաստագրման համար:

Դասախոսություն/ՑՈՒՑԱԴՐՈՒՄ (ՊՐԱԿՏԻԿԱ). 3 ժամ

նախապայման. Չկա

Հաստատված է “g” UC/CSU համալսարանների համար

Խորհուրդ է տրվում ԲԴՄԾ-ի հետևյալ աշակերտներին. Բոլոր NAF բժշկական ակադեմիաների և ԲԴՄԾ-ի բոլոր աշակերտների համար

ԼՐԱՏՎԱԿԱՆ ԱՐՎԵՍ 116 – ՍՑԵՆԱՐԻ ԳՐՄԱՆ ՆԵՐԱԾԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

Սա սցենարի դասընթաց է, որը աշակերտներին ցույց է տալիս սցենարի գաղափարից մինչև իրականացումը տանող ճանապարհը: Կտվորեն շարադրանք, կերպարներ, դրվագներ, ինչպես ստեղծել գրավիչ բացման դրվագ և հիշարժան վերջաբանի կարևոր կետերը: Ամբողջ դասընթացի ընթացքում կօգտագործվեն օրինակներ հաջողված գեղարվեստական կինոնկարներից և սերիալային ցուցադրումներից:

Դասախոսություն. 3 ժամ

նախապայման. Չկա

“a-g” հաստատված չէ (միայն UC/CSU համալսարան տեղափոխվելու համար)

Խորհուրդ է տրվում ԲԴՄԾ-ի հետևյալ աշակերտներին. մուլտիպլիկացիա, թվային մեդիա արտադրություններ, բեմական արհեստագործական տեխնոլոգիա, թվային արտադրություն

ԵՐԿԱԿԻ ԱՐՁԱՆԱԳՐՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ՆԿԱՐԱԳԻՐ



ՍՈՑԻՈԼՈԳԻԱ 011 – ՌԱՍԱ ԵՎ ԷԹՆԻԿ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Այս դասընթացն ուսումնասիրում է այս երկրում բնակվող էթնիկ և ռասայական խմբերի սահմանումները, պատմությունը և փորձառությունները: Ուղադրությունը դարձվում է սևամորթների, լատինամերիկացիների, ամեկացի բնիկների, ասիացի ամերիկացիների, արաբ ամերիկացիների և սպիտակամորթ էթնիկ խմբերի վրա: Քննարկումը ներառում է ռասայական/էթնիկ խմբերի հարաբերությունների վրա ազդող սոցիալական, տնտեսական և քաղաքական գործոնները, խտրականության և նախապաշարմունքների աղբյուրները և արդյոք հնարավոր է ունենալ սոցիալական հավասարություն տարբեր խմբերի միջև:

Դասախոսություն. 3 ժամ

նախապայման. Չկա

Հաստատված է “g” UC/CSU համալսարանների համար առաջարկվում է 11-12-րդ դասարանների համար Խորհուրդ է տրվում ԲԴՄԾ-ի հետևյալ աշակերտներին. ԲԴՄԾ-ի բոլոր աշակերտների համար

ՌՈԲՈՏԻԿԱ 130 –ՆԵՐԱՏՄԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ ՌՈԲՈՏՆԵՐԻ (ԻՆՔՆԱՇԽԱՏ ՍԱՐՔ) ՄԱՍԻՆ

Այս դասընթացը շարժական ինքնաշխատ սարքերի հիմունքների, ինքնաշխատ զենքերի և հարակից ինժեներական հասկացությունների ներածական ուսումնասիրություն է տրամադրում: Այն պատրաստում է աշակերտներին ռոբոտաշինության և հարակից տեխնոլոգիաների ավելի առաջադեմ ուսումնասիրություններ կատարելու համար: Աշակերտները, ինքնաշխատ սարքի նախագծման, սենսորների և գործող համակարգի, ծրագրավորման, էլեկտրոնիկայի և համակարգչային օգնությամբ նախագծված և 3 կողմանի տպագրության հիմնարար հասկացությունների, փորձ են ձեռք բերում: Դասընթացի ճնշող մեծամասնությունը բաղկացած է գործնական լաբարատորիայի միջոցով դասավանդվող փորձերից:

Դասախոսություն. 1 ժամ

նախապայման. Չկա

“a-g” հաստատված չէ (միայն CSU համալսարան տեղափոխվելու համար)

Խորհուրդ է տրվում ԲԴՄԾ-ի հետևյալ աշակերտներին. Բոլոր NAF ճարտարագիտական ակադեմիաների և ԲԴՄԾ-ի բոլոր աշակերտների համար